Դուք գի՞տեիք?

Լոս Անջելեսի Միասնական դպրոցական թաղամասը ապահովում է հինգ տարբեր ուսումնական ծրագրեր, որոնք նախատեսված են բավարարել տարրական դպրոցներում անգլերեն սովորողների և նրանց ծնողների կրթական նախասիրությունները: Անգլերեն սովորողների ծնողները կարող են ընտրել այդ ծրագրերից որևէ մեկը: Բոլոր հինգ ուսումնական ծրագրերը լիարժեք ապահովում են մուտքը դեպի ամբողջական կրթական դասընթաց և հանդիսանում են հարդակ տարբեր մակարդակի անգլերենի իմացությամբ տարրական դասարանների աշակերտների համար: Յուրաքանչյուր ուսումնական ծրագրի վերջնական նպատակն է, որ յուրաքանչյուր անգլերեն սովորող աշակերտ հասնի լեզվի իմացության բարձր մակարդակի: Բոլոր այն ուսանողները, այդ թվում անգլերեն սովորողները, որոնք սովորում են տարրական դասարաններում, կմասնակցեն քոլեջին կից նախապատրաստական (A-G) դասընթացներին միջնակարգ դպրոց փոխադրվելուց հետո և ավարտելով ավագ դպրոցը պատրաստ կլինեն քոլեջին և կարիերա սկսելուն:

Դրանից բացի, յուրաքանչյուր ուսումնական ծրագիրը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի, որպեսզի հաշմանդամություն ունեցող անգլերեն սովորողները ունենան հավասար հնարավորություններ մասնակցելու համար ծրագրին՝ համաձայն իրենց անհատական ուսումնական պլանի (ԱՈՒՊ): Բոլոր ուսումնական ծրագրերը տարբեր հնարավորություններ են տալիս շնորհալի և տաղանդավոր երեխաների համար հիմնվելով բացառապես անգլերեն լեզվի իմացության մակարդակին:

Այս բրոշյուրը մշակվել է ծնողների կողմից առաջարկված մտահաղացումներին համապատասխան և նկարագրում է տարբեր ուսումնական ծրագրեր տարրական դպրոցներում անգլերեն լեզուն ուսուցանող աշակերտների համար: Եթե այս բրոշյուրն ընթերցելուց հետո Ձեզ մոտ առաջանան հարցեր ուսումնական ծրագրերի վերաբերյալ, խնդրում ենք խոսեք Ձեր երեխայի դպրոցում անգլերեն լեզուն համակարգող, կամ լիազորված հոգաբարձուի հետ: Ձեր հարմարավետության համար հասանելի է նաև մեկ տեսահոլովակ՝ ներկայացնող ուսումնական ծրագրերը հետևյալ կայքում՝ http://mmed.lausd.net

Ի՞նչ է վերադասակարգումը

Վերադասակարգումը այն գործընթացքն է, որում անգլերեն սովորող աշակերտը ձեռք է բերել անգլերեն լեզվի բավականին բարձր մակարդակի իմացություն առանց անգլերեն լեզվի կատարելագործման դասընթացներ անցնելու: Սուն բրոշյուրում նշված բոլոր հինգ ծրագրերով անգլերեն ուսանողներից ակնկալվում է հասնել նվազագույն անգլերեն լեզվի իմացության լեզվի տիրապետման և կիրառման արվեստի բնագավառում, և նրանք հնարավորություն են ստանում հինգ տարվա ընթացքում վերադասակարգել իրենց անգլերեն լեզվի նախնական իմացությունը: Ուսանողները հնարավորություն ունեն վերադասակարգվել մանկապարտեզն ավարտելուց հետո:

Վերադասակարգվելու համար անգլերենի ուսանողները միևնույն ժամանակ պետք է համապատասխանեն բոլոր հետևյալ չափանիշներին՝

- ավարտել առնվազն հիմնական մակարդակը (դասարաններ 3-5) համաձայան պետական գնահատման համակարգի կամ որպես չափանիշ ուսուցանեն անգլերեն լեզուն (նախադպրոցական-մինչև 2-րդ դասարան), **և**
- Միավորների հաշվարկ “Նախնական բարձր մակարդակ” կամ ավելի բարձր (“4” կամ “5”) CELDT- ի համաձայն, “միջին” միավոր կամ ավելի բարձր (“3”. “4”, կամ “5”) լսողական, խոսակցական, ընթերցողության և գրավոր ոլորտներում **և**
- վաստակեն 3 կամ 4 միավոր անգլերեն լեզվի տիրապետման արվեստի ոլորտում անգլերեն լեզվի տարեկան առաջադիմության թերթիկում:

Վերադասակարգումը ավարտելուց հետո վերադասակարգման ծանուցման նամակը պետք է ստորագրվի ծնողի կողմից և տեղադրվի աշակերտի ընդհանուր տվյալներում:



Բազմալեզու և Բազմամշակութային Կրթության Վարչության Հեռանկարային հայտարարագիր

Մեր հեռանկարներն են՝ զարգացնել բազմալեզվությունը հաստատելով մշակութային արժեքները, փառաբանելով բազմազանությունը, արդյունավետ ուսուցանելը և սովորելը, որպես միջոց յուրաքանչյուր ԼԱԴՄԹ ուսանողի համար, դառնալ հաջողակ և պատրաստ լինել կարիերա ստեղծելուն և բարձրագույն կրթության ստանալուն 21-րդ դարում:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱՂԱՄԱՍ

Բազմալեզու և բազմամշակութային կրթության բաժին

333 S. Beaudry Avenue, 25th floor
Los Angeles, California 90017
(213) 241-5582

Լրացուցիչ տեղեկատվության համար
Խնդրում ենք այցելել:
http://mmed.lausd.net կայքը

Revised 2015-08-10

© 2015

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱՂԱՄԱՍ

Բազմալեզու և բազմամշակութային կրթության բաժին

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԱՆԳԼԵՐԵՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Բրոշյուր ծնողների համար

Միջնակարգ անգլերենի սովորողի սկսնակների ծրագիր

Ի՞նչ է սա

- Ուսումնական ծրագիր, որը դասավանդվում է անգլերեն լեզվով անգլերեն սովորողների համար, ովքեր գրանցվել են ԱՄՆ դպրոցներում 2 տարուց պակաս ժամանակահատվածով և նոր են սկսում ուսումնասիրել անգլերեն լեզուն:

Ի՞նչպես է այս ծրագիրը օգնում իմ երեխային

- Ուսանողները սովորում են անգլերեն և դպրոցական համայնքների և ԱՄՆ-ի մշակույթների մասին:

Ի՞նչն է դարձնում այս ծրագիրը եզակի

- Անգլերեն սովորողները կատարելագործում են հիմնական ուսումնական հմտություններ և գիտելիքներ:
- Անգլերեն սովորողներին օգնում են հարմարվել նոր դպրոցի առօրյային և հասարակությանը:
- Անգլերեն սովորողները կարող են ստանալ հիմնական օգնություն հիմնական ուսումնական առարկաներից:
- Անգլերեն սովորողները կարող են ստանալ հիմնական լեզվի դասընթաց որոշ հիմնական ուսումնական առարկաներից երբ տեղի են ունենում ծնողների կողմից ծրագրից հրաժարում:

Ո՞վ է կարող գրանցվել այս ծրագրում

- Անգլերեն սովորողները, ովքեր սովորել են ԱՄՆ դպրոցներում 2 տարուց ոչ ավելի:

Արագացված ուսուցանող ծրագիր երկարաժամկետ անգլերեն սովորողների համար (LTEL)**

Ի՞նչ է սա

- Ուսուցողական ծրագիր անգլերեն լեզվով ուսանողների համար, ովքեր գրանցվել են որպես անգլերեն սովորողներ 5 տարի կամ ավել ժամանակով (ցանկացած անգլերեն լեզվի առաջադիմության մակարդակ) որը դեռ չի բավարարել վերադասակարգման չափանիշ:

Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային

- Ուսանողները ստանում են արագացված ուսուցման ծրագրեր, որոնց նպատակն է օգնել վերադասակարգել և մուտք ունենալ բոլոր ուսումնական ծրագրերին:

Ի՞նչն է դարձնում այս ծրագիրը առանձնահատուկ

- Դասընթացը ներառում է արագացված անգլերենի գրագիտություն և սոցիալ-էմոցիոնալ օժանդակություն, որոնց նպատակն է վերադասակարգումը:
- Անգլերեն սովորողները ստանում են հանձնարարություն սովորել լեզուն իրենց այն ընկերների մակարդակով, ում մայրենի լեզուն է անգլերենը:
- Այն ուսանողներին հնարավորություն է տալիս բավարարել A-G պահանջները, պատրաստ լինել քոլեջին և կարիերային:
- 5 տարի կամ ավել ժամկետով որպես անգլերեն սովորող գրանցված ուսանողները (ցանկացած անգլերեն լեզվի տիրապետման մակարդակով) պետք է անցնեն LTEL դասընթաց:

Ո՞վ կարող է գրանցվել է այս ծրագրին

- Այն բոլոր ուսանողները, ովքեր սովորել են անգլերեն 5 կամ ավելի տարի և դեռ չեն անցել վերադասակարգրման չափանիշները, պետք է գրանցվեն այս ծրագրում:

Երկլեզու, երկկողմանի լեզվի խորացված ուսուցում

Ի՞նչ է սա:

- Ուսումնական ծրագիր անգլերեն սովորողների և անգլերենի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար հիմնական լեզվով (հիմնական ուսուցանվող լեզու) և անգլերենով:

Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային

- Ուսանողները սովորում են Սովորական ուսումնական ծրագիր անգլերենով և ուսուցանվող լեզվով:

Ի՞նչն է դարձնում այս ծրագիրը առանձնահատուկ

- Դասընթացները անցկացվում են հիմնական ուսուցանվող լեզվով և անգլերենով: 6-օրյա ուսուցման դեպքում 2-3 օր ուսուցանվում է հիմնական ուսուցանվող լեզվով, իսկ մնացածները անգլերեն լեզվով:
- Երկլեզվություն և երկգրագիտությունը, ուսումնական առաջադիմությունն և դրական միջմշակութային կարողությունները կատարելագործող ուսանողները:
- Բոլոր դասընթացները բավարարում են քոլեջի նախապատրաստական պահանջները և կարող են ներառել խորացված ուսուցման ծրագիր ցանկացած լեզվով:

Ո՞վ է կարող ներգրավվել այս ծրագրում

- Անգլերեն սովորողները և անգլերենի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները (IFEP, RFEP, and EO), ովքեր գրանցված են եղել Երկլեզու Ծրագրին K-6 մակարդակներում: Տարբեր նախադրյալներ ունեցող անգլերենի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները (IFEP, RFEP, and EO) :
- 6-12 դասարանի Անգլերենի Սովորողներ, ովքեր սահուն տիրապետում են հիմնական ուսուցանվող լեզուն:

Ինձ արդյոք անհրաժե՞շտ է ծնողի կողմից ծրագրից հրաժարում*

- Այո:

Հիմնական անգլերեն լեզվի Ծրագիր

Ի՞նչ է սա:

- Ուսումնական ծրագիր անգլերեն սովորողների և անգլերենի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար հիմնական լեզվով (հիմնական ուսուցանվող լեզու) և անգլերենով:

Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային

- Ուսանողները սովորում են Սովորական ուսումնական ծրագիր անգլերենով և ուսուցանվող լեզվով:

Ի՞նչն է դարձնում այս ծրագիրը առանձնահատուկ

- Ուսուցողական ծրագիր նախատեսված անգլերեն լեզվի առաջադիմություն ունեցող ուսանողների համար:
- Անգլերենը կիրառվում է որպես ուսուցման միակ լեզու:
- Անհրաժեշտության դեպքում անգլերեն սովորողները ստանում են օգնություն, այդ թվում անգլերեն սովորողների համար հատուկ ռազմավարությունների կիրառում
- Անգլերեն սովորողները ստանում են օրեկան 60-120 րոպե անցնում են անգլերեն լեզվի կատարելագործման դասընթացներ հատուկ ուշադրություն դարձնելով ակադեմիական անգլերենին:

Ո՞վ է կարող ներգրավվել այս ծրագրում

- 6-12 դասարանների անգլերենից բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները և/կամ անգլերենից բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները ըստ նրանց պաշտոնական լեզվի դասակարգման (IFEP, RFEP և EO) :
- Անգլերենի ավելի ցածր մակարդակ ունեցող ուսանողները կարող են գրանցվել, եթե ծնողները դիմում են ներկայացրել, ըստ որի հրաժարվում են կառուցվածքային անգլերենի խորացված ուսուցման ծրագրից:

Կառուցվածքային անգլերենի խորացված ուսուցման ծրագիր

Ի՞նչ է սա:

- Ուսումնական ծրագիրը, որը ուսուցանվում է անգլերենով սկսնակ անգլերեն սովորողների համար:

Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային

- Ուսանողները ստանում են անգլերեն լեզվի հմտություններ համապատասխան աջակցությամբ մինչև լեզվական հիմքը դառնա հասանելի անգլերենի դասարանում:

Ինչպե՞ս է այս ծրագիրը օգնում իմ երեխային

- Ուսանողները ձեռք են բերում անգլերեն լեզվի հմտություններ ստանդարտ ծրագրով սովորելիս համապատասխան օգնություն ստանալով:
- Ուսուցիչները կիրառում են հատուկ հնարքներ անգլերեն սովորողներին ուսումնական առարկաներ դասավանդելու համար:
- Ուսանողները անցնում են առնվազն 60-120 րոպե տևողությամբ անգլերենի կատարելագործման համար հանձնարարություններ:

Ո՞վ է կարող ներգրավվել այս ծրագրում

- 6-12 դասարանի անգլերեն սովորողները, ովքեր նոր ես սկսում կատարելագործել լեզուն:
- Անգլերեն սովորողներ, ովքեր գրանցված են ԱՄՆ դպրոցում ոչ ավել քան 5 տարի:

***Ծնողների կողմից ծրագրից հրաժարումը** անհրաժեշտ է, եթե դպրոցի ղեկավարությունը չորոշի ,թե դպրոցում առաջարկված վերապատրաստման ծրագիրը օգուտ չի բերի աշակերտին:Եթե Դուք ունեք հարցեր դպրոցի՝ Ծնողների կողմից ծրագրից հրաժարման վերաբերյալ որոշման հետ կապված, խնդրում ենք հանդիպում նշանակել դպրոցի տնօրենի հետ կամ դիմեք Ձեր երեխայի դպրոցի տեղային թամամաս լրացորցիչ աջակցություն ստանալու համար: Օրենքը պահանջում է, որ դպրոցները առաջարկեն ծրագրեր այն ժամանակ. երբ 20-ից ավելի ծնողներ դիմում ներկայացնեն այդ մասին իրենց երեխաների համար նույն ուսումնական տարում: Խորհրդակցեք դպրոցի աշխատակազմի հետ ավելի շատ տեղեկություն ստանալու համար:.

**Բոլոր երկարաժամկետ ծրագրով անգլերեն սովորողները կընդգրկվեն սույն ծրագրում: Երկարատև ծրագրով անգլերեն սովորողը այն ուսանողն է, ով ընդունվել է որպես անգլերեն սովորող, հաճախել է դպրոց Ամերիկայի Միացյալ Նահանգներում ավելի քան ամբողջական հինգ տարի, սակայն դեռ չի բավարարել դասակարգման համար անհրաժեշտ չափանիշները:

Ավարտական գնահատականը տրամադրվում է յուրաքանչյուր ավատական դասարանի համար: Ավարտական գնահատականը հաշվարկվում է բաժանելով շրջանավարտների քանակը անդամակցության աճի բազայով: Անդամության բազան ստացվում է այն ուսանողների քանակից, ովքեր անցում են 9-րդ դասարան չորս տարի ավելի շուտ և համապատասխանեցվում է այն ուսանողների համար, ովքեր տեղափոխվել են այդ թաղամաս կամ թաղամասից դուրս 9-ից 12 դասարանների ժամանակահատվածում: 2013-2014թ.-ին **LAUSD 4-ամյա ավարտական գնահատականը 70% է կազմում, դա նշանակում է ավելացում 2%-ով 2012-2013 ուսումնական դպրոցական տարվա համար:**

Անգլերեն լեզվի իմացության մակարդակը հաշվարկվում է տարեկան կտրվածքով համաձայն Կալիֆորնիայի անգլերեն լեզվի կատարելագործման թեստի միջոցով: